Հանրային ռադիոընկերության «Ստատուս քվո» հաղորդաշարի (05.03.2023) թողարկման վերաբերյալ

Հայաստանի հանրային ռադիոընկերության Առաջին ծրագրի հաղորդումների ընտրանքային մշտադիտարկման արդյունքում պարզվել է, որ «Ստատուս քվո» հաղորդաշարի 05.03.2023-ի թողարկման ընթացքում վարող-հեղինակը անթաքույց կողմնակալ վերաբերմունք է ցուցաբերել լուսաբանվող թեմայի շահագրգիռ կողմերից մեկին՝ հրավիրված հյուրին ուղիղ տեքստով զորակցություն հայտնելով:

Մշտադիտարկման արդյունքները քննարկվել են հաղորդման հեղինակի հետ: Անդրադարձ է կատարվել հանրային հեռարձակման բարձր ստանդարտներին և լրագրողական անկողմնակալության սկզբունքին, որոնք բխում են «Տեսալսողական մեդիայի մասին» ՀՀ օրենքի պահանջներից և Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների Կանոնագրից:

Հանրային ռադիոյի գործադիր տնօրեն Գարեգին Խումարյանի 10.03.2023 թ. N Ռ/23-01-20 որոշումով «Ստատուս քվո» հաղորդաշարի արտադրությունն ու հեռարձակումը դադարեցվել է մեկ ամիս ժամկետով: